ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1915 թ. մայիսի 4-ին հայ կամավորական վաշտերը, իսկ մայիսի 5-ին ռուսական բանակի առաջապահ զորամիավորումները գեներալ Նիկոլանի հրամանատարությամբ մտան Վան: Քաղաքն իր շրջակայքով ենթարկվեց ռուսական զինվորական իշխանությանը[1]:

Երբ կամավորական գնդերի հետևից ռուսական բանակը մտավ Վան, պարզված տեսարանը խորապես ազդեց ռուսական զինվորական հրամանատարության վրա: Նա տեսավ ողջ և արի մի ժողովուրդ, որը զենքով կարողացել էր պաշտպանել իր գոյությունը թուրքական բարբարոս կառավարության դեմ և վանել նրան իր սահմաններից[2]:

Այգեստանի և Քաղաքամեջի կիսաքանդ դիրքերն ու գնդակներից և ռումբերից ծեծված պատնեշները պերճախոս վկաներն էին ինքնապաշտպանության դիմած ժողովրդի երեկվա օրհասական ոգորումների:

Ուստի ռուսական բանակի հրամանատար Նիկոլաևը «գնահատելով Վասպուրականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը՝ թուրք կառավարությանն անզոր դարձնելու իր ազգասպան քաղաքականության մեջ և հավանություն տալով հայ ժողովրդի կուլտուրական ձգտումները»[3], ինչպես նաև «գնահատելով այդ ժողովրդի ռազմական արժանիքներն ու ինքնավարության ձեռնհասությունը»,[4] բավոք համարեց ձեռք չբարձրացնել նրա արյունով ձեռք բերած ազատությանը, այլ նրան թողեց ազատագրված երկրի կառավարությունը:

Վանում ռուսական բանակի փառավոր ընդունելությունից հետո, հաջորդ օրը, կազմվում է ազատագրված Վասպուրականի 1-ին կառավարությունը, որի անդամներ են ընտրվում Ավետիս Թերզիբաշյանը, պրոֆ. Միքայել Մինասյանը, Արամ Մանուկյանը և ուրիշներ: Արմենակ Եկարյանը նշանակվում է երկրապահ գնդի հրամանատար: Բայց շուտով Վան են հասնում բոլոր կամավորներն՝ իրենց ղեկավարներով, և շատ այլ մտավորականներ, մեծ մասամբ դաշնակցականներ, և առանց տեղացիների կարծիքը հարցնելու՝ ցրում են այս կառավարությունը:

---

[1] **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն (հուշեր 1890 էն 1940), Փարիզ, 1947, էջ 330:

[2] Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակին առթիվ, 1915-1930, Վենետիկ, Ս. Ղազար 1930, էջ 78, նաև Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, Երևան, 1990, էջ 96:

[3] **Արսեն Հացագործյան**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 211:

[4] Վասպուրական, էջ 78:

Մայիսի 7-ին գեներալ Նիկոլաևի հրամանագրով Վանի և շրջակա գավառների ժամանակավոր նահանգապետ է նշանակվում Արամ Մանուկյանը: Այս նշանակումը պաշտոնական հատուկ գրությամբ հաստատվում է նաև Կովկասյան զորաբանակի ընդհանուր հրամանատար գեներալ Օգանովսկու կողմից՝ պայմանով, որ նորանշանակ նահանգապետը ենթարկվի զինվորական իշխանությանը, այսինքն՝ Վանի բերդի ռուսական պարետին, և զինվորական կարգադրություններն արվեն Արամի միջոցով[5]:

Պատմագրության մեջ Վան-Վասպուրականում ստեղծված վարչա-քաղաքական միավորը ոմանք անվանել են «կառավարություն[6]« կամ «ինքնավար կառավարություն»[7], ուրիշները՝ «ինքնավարություն» կամ «փոքրիկ անկախություն»[8], իսկ ոմանք էլ այն կոչել են «քաղաքացիական վարչություն»[9]:

Դրանից հետո ամեն ինչ վերագրում են դաշնակցականներին և Արամին: Արմենակ Եկարյանը իրավացիորեն նկատել է, որ Ռուբենը և Կոմսը Արամից ավելի պատրաստված, բարձրագույն կրթության տեր դաշնակցականներ էին, սակայն ինչ արեցին նրանք Մուշում և Սասունում և ինչ պիտի աներ Արամը Վանում[10]:

Այսպիսով, գեներալ Նիկոլաևը փաստորեն գրավված Վասպուրականի քաղաքացիական իշխանությունն ամբողջովին հանձնում է հայերին, քանի որ նրանց քաջարի պայքարի ու զոհերի շնորհիվ էր ազատագրվել քաղաքը՝ հնարավորություն տալով ռուսական բանակին առանց մի գնդակ արձակելու մտնել Վան[11]:

Այս նշանակումն առաջ բերեց մեծ ոգևորություն:

Սրանով Ռաֆֆու երազն ու ցանկությունն իրականություն էր դառնում: Տասնյակ տարիներ առաջ՝ նա երգել էր.

Ախ, երբ տեսնեմ Կարին նստած իշխան,
Հայ տառերով գրեր հայոց հրաման ...

Միայն թե Կարինի փոխարեն Վանը եղավ հայկական այս երազված կառավարության կենտրոնը, և նրա նահանգապետ Արամը հայ տառերով գրում էր հայ ժողովրդին ուղղված իր առաջին կոչ-հրամանը, որ ահավասիկ.

«Հայ ժողովրդին,

Քաղաքացիներ,

Ռուսական հաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ և իրավակարգ կբանա մեր քաղաքի և գավառի իրավազուրկ ժողովուրդի համար: Դարերու

---

[5] ՀԱԱ, ֆ. 242, ց.1, գ. 19, թ. 44, նաև ֆ. 121, ց. 1, գ. 158, թ. 1, նաև **Ա-Դո**, Մեծ դեպքերը Վասպուրականում, Երևան 1917, էջ 438, նաև **Ց. Իրազեկ**, Մոտիկ անցյալից, Պատմական դեպքեր և ապրումներ, 1917-1922, Բեյրութ, 1956, էջ 2, նաև Հայ հեղափոխական կուսակցությունները և Օսմանյան կառավարությունը, Կ.Պոլիս, 1916, էջ 117:

[6] **Խ. Գաբիկյան**, Հայ ազատագրական շարժումները, Անթիլիաս, 1976, էջ 241:

[7] **Հ. Երամյան**, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. 1, Ալեքսանդրիա, 1929, էջ 340:

[8] **Ց. Իրազեկ**, Մոտիկ անցյալից, Պատմական դեպքեր և ապրումներ, 1917-1922, էջ 2:

[9] **Ծ. Աղայան**, Անդրանիկ, դարաշրջան, դեպքեր, դեմքեր, Երևան, 1994, էջ 439:

[10] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, նաև «Հայրենիք», 1915, մայիս, թիվ 7, էջ 86-87:

[11] **Արսեն Հացագործյան**, էջ 211-212:

ստրկության և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կապրինք այս օրերուն՝ հայ ժողովուրդի շինարար և ստեղծագործ ոգիի ծնունդն է, որ մենք կտեսնենք այժմ:

Ռուս զորքերու հրամանատարը, գեներալ Նիկոլաևը, գնահատելով Վասպուրականի հայ ժողովուրդի հերոսական ջանքերը՝ թուրք կառավարությունը անզոր դարձնելու իր ազգասպան քաղաքականության մեջ և հավանելով հայ ժողովուրդի կուլտուրական ձգտումները, բարեհաճեցավ 7 մայիսի 1915, թիվ 16 մասնավոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործ իր բոլոր ճյուղերով:

Այսօր արդեն կազմակերպվեցավ ոստիկանական, դատական, գյուղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական և այլ վարչություններ:

Ասով կհայտարարեմ ամբողջ ժողովուրդին, որ նոր կառավարությունը կազմակերպված ըլլալով, անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարության հանձնախումբերուն, քաղաքի և շրջակայքի մեջ բնականոն վիճակ ստեղծելու համար:

Ներկա պատմական պատասխանատու օրերուն մեջ հայ ժողովուրդը միայն մեկ նշանաբան պիտի ունենա - համախմբվիլ ամբողջ եռանդով կառավարության շուրջը, վերակազմակերպելու համար կյանքը քաղաքի և շրջանի մեջ, արժանի լինելու համար քառորդ դարե ավելի մղված պայքարին մեջ ինկած հերոսներու հույսերուն և հիշատակին հանդեպ, բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտոնի գիտակցությունը Փոքր Ասիո այս ծայրագավառին մեջ:

Ռուս գեներալը մեր այս հույսերուն իսկական գիտակցությամբ էր, որ հայ ժողովուրդի և իմ հանդեպ ցույց տվեց այս մեծ վստահությունը:

Քաղաքացիներ, ձեզ կմնա մեր այդ հավակնությանց և հույսերուն ընդառաջ գացող հաղթական բանակի և գեներալի վստահությունը բացարձակապես արդարացնել և ավելի լավագույնի արժանի և պատրաստ գտնվիլ:

Վանի շրջանի կառավարիչ՝ Արամ

1915, մայիսի 8,

Վան - Այգեստան»[12]:

Սակայն ցարական կառավարությունը բնավ էլ չէր ցանկանում Վասպուրականին տալ ինքնավարություն: Ռազմական գործողությունների ընթացքն այնպես դասավորվեց, որ Վանը գրավելուց հետո ռուսական բանակի առջև ծագեցին կարևոր խնդիրներ: Հարկավոր էր շտապ հետապնդել նահանջող թշնամուն, որպեսզի նա չկարողանար ամրապնդվել մոտակայքում, մինչև որ բանակը հասներ նախատեսվող սահմաններին: Դրա համար ռուսական բանակը չկարողացավ Վասպուրականի կառավարումն իր ձեռքը վերցնել: Ճիշտ է, հայերը դարեր շարունակ զուրկ են եղել պետականությունից, սակայն Ապրիլյան կռիվների ընթացքում նրանք ցույց են տալիս

[12] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4, նաև Վասպուրական, էջ 79, նաև Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 97, Հայ հեղափոխական կուսակցությունները և Օսմանյան կառավարությունը, Կ.Պոլիս, 1916, էջ 118:

կառավարման իրենց ունակությունը, ստեղծում զինվորական մարմին և նրան կից մի շարք հանձնաժողովներ ու կառավարման տարբեր հաստատություններ, որոնց հիման վրա էլ կազմվում են նահանգի կառավարման մարմինները:

Միաժամանակ գեներալ Նիկոլաևը Արամ Մանուկյանին հանձնարարեց կազմել ժամանակավոր կառավարություն, «որպեսզի քաղաքի և շրջակայքի մեջ բնականոն վիճակ ստեղծվի»[13]: Ինչպես Ա-Դոն է նկատում, «Դարերի ստրկությունը շալակած, վարից վեր նայած մի ժողովուրդ ժամանակավոր կառավարություն պիտի հիմներ, մարմիններ կազմեր, կառավարող ուժեր առաջ քաշեր և ավերված երկիրը և հոշոտված ժողովուրդը խնամեր և այն էլ դեռևս վխտացող քուրդ ցեղերի ու նրանց հետապնդող զորքերի ներկայությամբ»[14]:

Արամը մի քանի օրվա մեջ կազմակերպեց նահանգային վարչություն, Վանի զուտ հայկական առաջին ժամանակավոր կառավարությունը՝ անհրաժեշտ բոլոր հաստատություններով[15]:

Վանի Խաչ-փողանի փողոցի վրա փոքր Քյանդրչի կոչվող մասում գտնվում էր ֆրանսիական Դոմինիկյան քույրերի որբանոց-դպրոցը, որը երկու հարկանի մի ընդարձակ շենք էր իր մեծ պատշգամբով ու հարմարություններով՝ կառուցված 1910 թ.: Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարությունն այդ շենքը գրավեց, իսկ Վանի ապրիլյան կռիվների ժամանակ այն անցավ հայերի ձեռքը: Ահա այդ շենքի մեջ էլ հաստատվեց Վանի ժամանակավոր կառավարությունը:

Այն ուներ հետևյալ կազմը.

1. Նահանգային խորհուրդ
2. Նահանգային վարչություն
3. Տնտեսական մարմին
4. Քաղաքապետական վարչություն
5. Կրթական տեսչություն
6. Երկրագործական մարմին
7. Առողջապահական մարմին
8. Առևտրական մարմին
9. Ոստիկանական տեսչություն
10. Դատարանական կազմ
11. Գավառային վարչություն
12. Գավառապետություններ

Ա) **Նահանգային խորհուրդը** հայկական կառավարության բարձրագույն օրենսդիր մարմինն էր, որը քննում և հաստատում էր նահանգային ընդհանուր ելևմտից նախահաշիվները, հսկում էր մյուս մարմինների և առհասարակ պաշտոնեության բարվոք ծառայության վրա, պատասխանատվության էր կանչում պաշտոնյաներին, նշանակում էր իրենց պաշտոններում, կարգավորում էր նահանգի հողային, կրթական, առողջապահական, առևտրի, հարկերի և այլ խնդիրները և այլն: Ընդունված օ-

[13] **Արսեն Հացագործյան**, էջ 211:

[14] **Ա-Դո**, Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915 թթ., էջ 439:

[15] **Խ. Գաբիկյան**, Հայ ազատագրական շարժումները, Անթիլիաս, 1976, էջ 241:

րինագծերը ենթակա էին նահանգապետի վավերացմանը, որն ուներ վետոյի իրավունք[16]: Նահանգային խորհուրդը բաղկացած էր մյուս մարմինների 14 նախագահներից կամ վարիչներից, և դրա նախագահն էր ընդհանուր նահանգապետ Արամ Մանուկյանը, որը վերահսկում էր բոլոր մարմինների աշխատանքները:

Նահանգային խորհրդի անդամներն էին.

1. Արամ Մանուկյան - նահանգապետ
2. Սիրական Տիգրանյան - փոխնահանգապետ
3. Պարույր Լևոնյան - նահանգապետի օգնական և թարգման
4. Արտակ Դարբինյան - դիվանապետ
5. Աղաբեկ Համբարյան - դատարանի նախագահ
6. Պետրոս Մոզյան - քաղաքապետ
7. Միքայել Մինասյան - կրթության տեսուչ
8. Հրանտ Գալիկյան - ընդհանուր դատախազ
9. Խաչատուր Ջենոբյան - երկրագործության տեսուչ
10. Գևորգ Ճիտեչյան - տնտեսական մարմնի նախագահ
11. Դավիթ Փափազյան - ոստիկանապետ
12. Ավետիս Թերզիբաշյան
13. Կոստյա Համբարձումյան
14. Սարգիս Արարատյան

Վերջին երկուսը ռուսական բանակի հայ զինվորականներ էին[17]:

Բ) **Նահանգային վարչությունը** նահանգի գլխավոր գործադիր մարմինն էր՝ բաղկացած 13 հոգուց.

1. Արամ Մանուկյան - նահանգապետ
2. Սիրական Տիգրանյան - փոխնահանգապետ
3. Պարույր Լևոնյան - նահանգապետի օգնական ու թարգման
4. Արտակ Դարբինյան - դիվանապետ
5. Կարապետ Աճեմյան - հաշվակալ
6. Տիգրան Թերլեմեզյան - գանձապահ
7. Օնիկ (Հովհաննես) Մխիթարյան - քարտուղար
8. Ներսես Պասյան - գործավար
9. Արփիար Սաֆրաստյան - գործավար
10. Մաղաք Շալճյան - գործավար
11. Վաղարշակ Կզարթմյան - գործավար
12. Նիկողայոս Հայրապետյան - գործավար
13. Գաբրիել Շահինյան - գործավար

Նահանգային խորհրդի անդամների մեծ մասը և նահանգային վարչության որոշ անդամներ միաժամանակ հանդիսանում էին մյուս մարմինների և օրգանների ղեկա-

[16] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 2:
[17] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 3:

վարները[18]:

Գ) **Տնտեսական մարմինը** նահանգի տնտեսական, եկամտային գործերի վարիչն էր: Այն բաղկացած էր 8 հոգուց.

1. Գևորգ Ճիտեչյան- նախագահ
2. Արմենակ Սարգսյան - վերաքննիչ
3. Հարություն Շալջյան - գանձապահ
4. Հակոբ Տեր-Հակոբյան - հաշվակալ
5. Գալուստ Թորգոմյան - ատենապետ
6. Կարապետ Զաքարյան - քարտուղար
7. Վարդան Դարբինյան - գործավար
8. Կարապետ Ճիտեչյան - գործավար[19]:

Դ) **Քաղաքապետական վարչությունն** ուներ այն իրավասությունները, ինչ որ առհասարակ ունեին քաղաքային վարչությունները: Նրա կազմը բաղկացած էր 10 հոգուց:

1. Պետրոս Մոզյան - քաղաքապետ
2. Արմենակ Վուվունիկյան - վարչական անդամ
3. Վահրամ Տեր-Պողոսյան - վարչական անդամ
4. Մկրտիչ Հյուսյան - վարչական անդամ
5. Վահան Մարության - վարչական անդամ
6. Լևոն Բուլղարացի - երկրաչափ
7. Լևոն Գրիգորյան - առողջապահական քննիչ
8. Ղարիբջան Դեղդիրյան - գանձապահ
9. Գալուստ Բաբաջանյան (Բաբաջյան) - ճարտարապետ
10. Տիգրան Հովհաննիսյան - քարտուղար[20]:

Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը: Ընդհանուր առմամբ Վանի քաղաքապետարանն ունեցել է շուրջ 1000 աշխատակից[21]: Այն տվյալ իրադրության մեջ ստեղծված մի մարմին էր, որի անդամների վարչական մարմինները ընտրվում էին նահանգապետի կողմից և ժողովի մեջ ունեին ձայնի իրավունք:

Ե) **Կրթական տեսչությունը** վարում էր նահանգի կրթական գործը: Այս մարմնի կազմը բաղկացած էր 4 հոգուց.

1. Միքայել Մինասյան - կրթական տեսուչ
2. Եղիազար Ռշտունի - տեսչության անդամ
3. Մարտիրոս Նալբանդյան - տեսչության անդամ

---

[18] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 3, 42, նաև Վասպուրական, էջ 80:
[19] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 42, նաև Վասպուրական, էջ 80:
[20] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 43, նաև Վասպուրական, էջ 81:
[21] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 62, թ. 61:

4. Հրաչյա Տեր-Հովհաննիսյան - քարտուղար[22]:

Զ) **Երկրագործական մարմինը** զարգացնելու էր երկրագործությունը՝ հայթայթելով երկրագործական նոր գործիքներ և կազմակերպելու էր փոխառության գործը հողագործ դասի համար: Այն բաղկացած էր 3 հոգուց.

1. Խաչիկ Զենոբյան - տեսուչ
2. Արշավիր Ավետաղայան (Ավետիսյան) - օգնական
3. Խաչիկ Պետրոսյան - դռնապահ[23]:

Է) **Առողջապահական մարմնի** պարտականությունն էր հսկել նահանգի առողջապահական պայմաններին և քաղաքի մաքրությանը: Նրա կազմը բաղկացած էր 4 հոգուց.

1. Արտաշես Բաբալյան - նախագահ
2. Մամբրե Մկրյան - անդամ
3. Հակոբ Յագոյան - անդամ
4. Խաչիկ Գալստյան - վիրաբույժ

Ը) **Առևտրական մարմինը** զարգացնելու էր նահանգի վաճառականությունը և արդյունաբերությունը, ինչպես նաև վճռելու էր առևտրական դասի մեջ ծագած զանազան խնդիրները: Կազմը բաղկացած էր 5 հոգուց.

1. Համազասպ Տեր-Պողոսյան - նախագահ
2. Ավետիս Երամյան - անդամ
3. Հովհաննես Շահբազյան - անդամ
4. Մկրտիչ Հյուսյան - անդամ
5. Հովհաննես Փիրումյան - անդամ

Թ) **Ոստիկանական տեսչությունը** հսկում էր հատկապես քաղաքի վրա և ուներ 5 հոգանոց կազմ.

1. Դավիթ Փափազյան - ոստիկանապետ
2. Ղևոնդ Խանջյան - օգնական՝ ռուսական բաժնի
3. Հրանտ Կարինյան - քարտուղար
4. Հովսեփ Քարտաշյան - գրագիր[24]:

Ոստիկանական վարչությունը քաղաքում ուներ շրջանային հինգ բաժանմունքներ՝ հինգ շրջանապետերով և նույնքան օգնականներով ու քարտուղարներով: Այն ուներ նաև 60 հետևակ և 12 հեծյալ ոստիկաններ: Հետագայում ոստիկանության թիվը հասավ 360-ի՝ իր 40 տասնապետերով:

Հիշյալ շրջանապետերն էին.

1. Գրիգոր Ճոնյան - Խաչ-փողոցի շրջանում

---

[22] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 42, նաև Վասպուրական, էջ 81:
[23] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 56, թ. 43, նաև Վասպուրական, էջ 81:
[24] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 63, թ. 1, նաև Վասպուրական, էջ 82:

2. Արմենակ Դեղձունյան - Նորաշեն թաղում
3. Արմենակ Տեր-Թովմասյան - Մեծ Քյանդրչիում
4. Մկրտիչ Գարասեֆերյան - Արարքում
5. Ռուբեն Առեղցյան - Քաղաքամիջում

Ոստիկանական կազմի մեջ հաշվվում էին նաև՝
1 բանտապետ, 1 քարտուղար,
1 օգնական, 1 դռնապան[25]:

Ժ) **Դատարանական կազմ.**

1) Հաշտարար դատարան

Ռուբեն Շատվորյան - դատավոր
Ենոք (Ենովք) Պուրանյան (Պապանյան) - քարտուղար
Բարսեղ Պապիկյան - քարտուղար
Միհրդատ Բրուտյան - գործավար

2) Հարցաքննիչ դատավորություն

Պողոս Չիթճյան - հարցաքննիչ դատավոր

3) Շրջանային դատարան

Աղաբեկ Համբարյան - նախագահ
Եղիշե Քաջունի - դատարանի անդամ
Եսայի Օհանյան - դատարանի անդամ
Արսեն Հացագործյան - դիվանապետ
Հակոբ Ջրբաշյան - քարտուղար
Խաչատուր Գևորգյան - քարտուղար
Մարգար Ազնավուրյան - քարտուղար
Բարունակ Դարբինյան - քարտուղար
Փիլիպոս Պոյախանջյան - սենեկապան
Վարդան Ավագյան - կոչնակ
Մատթեոս Կարապետյան - կոչնակ
Տիգրան Գուրգենյան - կոչնակ
Հովասափ - կոչնակ
Արամ Բաղելտյան - կոչնակ
Արմենակ Օհաննեսյան - կոչնակ
Պողոս Աթեշյան - կոչնակ
Հովհաննես Տեր-Օհանյան - կոչնակ

4) Ընդհանուր դատախազություն

Հրանտ Գալիկյան - ընդհանուր դատախազ
Մարկոս Բալտոշյան (Բաղտոշյան) - քարտուղար[26]:

5) Գործադիր պաշտոնեություն (դատարանի որոշումները գործադրող)

Դերջան Սինանյան - գործադիր պաշտոնյա

---

[25] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 42-43, նաև Վասպուրական, էջ 82:
[26] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 13, 42, նաև Վասպուրական, էջ 82:

Գրիգոր Քաջբերունի - քարտուղար

6) Ընդհանուր քննչություն

Կարապետ Այճյան - ընդհանուր քննիչ

Պետրոս Աշճիպաշյան - քարտուղար

ԺԱ) **Գավառային վարչություն.** Այս մարմինը կազմում էր շրջանային վարչության մեկ բաժանմունքը և կարգավորում էր գավառապետությունների և կենտրոնի կառավարության փոխհարաբերությունները: Այն ուներ հետևյալ կազմը.

Արմենակ Փոխարյան - դիվանապետ

Միհրան Մուրատխանյան - քարտուղար

Սարգիս Սիմոնյան - գործավար[27]:

ԺԲ) **Գավառապետություններ.** Վասպուրականը բաժանվեց մոտ 14 մեծ և փոքր գավառների, որոնք կառավարվում էին գավառապետներով և տեղական վարչական ու ոստիկանական անհրաժեշտ պաշտոններով, այսինքն՝ յուրաքանչյուր գավառ ուներ իր գավառային վարչությունը կամ գավառապետությունը: Գավառները հետևյալներն էին՝ իրենց գավառապետերով.

1.	Շատախ գավառ	Գավառապետ՝	Սամուել Մեսրոպյան
2.	Գավաշ	Գավառապետ՝	Լևոն Շաղոյան
3.	Մոկս	Գավառապետ՝	Գրիգոր Նահապետյան
4.	Նորդուզ	Գավառապետ՝	Պետրոս Էֆենդի
5.	Խոշաբ	Գավառապետ՝	Արմենակ Տեր-Պողոսյան
6.	Արճակ	Գավառապետ՝	Շիրին Հակոբյան
7.	Ջանիկ (Թիմար)	Գավառապետ՝	Աբգար Սեմերճյան
8.	Ալուր (Թիմար)	Գավառապետ՝	Հարություն Հյուսյան
9.	Բերկրի	Գավառապետ՝	Գագիկ Թոխմախյան
10.	Արճեշ	Գավառապետ՝	Նշան Ժամագործյան
11.	Ալջավազ	Գավառապետ՝	Փանոս Մարության
12.	Հայոց ձոր	Գավառապետ՝	Նշան Նալբանդյան
13.	Արտամետ	Գավառապետ՝	Հովհաննես Արտամետցյան
14.	Շահբազի գավառ	Գավառապետ՝	Աբել Աղվանյան[28]:

Յուրաքանչյուր գավառ ուներ իր առանձին թղթատար պաշտոնյաները:

Երկրապահ զնդի ղեկավարումը հանձնվեց Արմենակ Եկարյանին:

Պետք է կազմվեին ևս 4 գավառներ՝ Կարճկանը և Կարկառը դեռևս կռիվների մեջ էին, Սարայի և Աղբակի դեռևս տեղահանված ժողովուրդը չէր վերադարձել, իսկ նախկին Թիմարը բաժանվել էր երկուսի՝ Ջանիկի և Ալյուրի, Վան-Տոսպը՝ Արտամետի և Շահբազի, որոնք նախկինում շրջաններ-նահիրներ էին:

Ուշագրավ է այն երևույթը, որ Վան-Վասպուրականի առաջին հայկական կառա-

[27] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 58, թ. 42, նաև Վասպուրական, էջ 83:

[28] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 7-8, նաև Վասպուրական, էջ 83, նաև «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, մայիս, թիվ 7, էջ 89-90, **Ա-Դո**, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 445-446:

վարության աստիճանաբար ձևավորված կազմի մեջ վերկուսակցականության սկզբունքով ընդգրկվել էին ինչպես տեղի, այնպես էլ կովկասահայ կարող և բանիմաց մտավոր ուժեր, որը միանգամայն արժեվորում էր կառավարության հեղինակությունը[29]: Այսպես, մի շարք մարմինների նախագահներ՝ նպաստից հանձնաժողովի նախագահ՝ Հովհ. Կուլողլյան, բյուջեի հանձնաժողովի նախագահ Ա. Թերզիբաշյանը, կրթական տեսչության նախագահ պրոֆ. Մ. Մինասյանը, նահանգապետարանի հաշվապահ Կ. Աճեմյանը, քաղաքի ոստիկանության ոստիկանապետ Ղ. Խանջյանը, նահանգային վարչության դիվանապետ Ա. Դարբինյանը, ոստիկանության ընդհանուր ղեկավար Ա. Եկարյանը ռամկավարներ էին, ընդհանուր դատախազ Հ. Գալիկյանը հնչակ էր, շրջանային դատարանի նախագահ Ա. Համբարյանը, գյուղատնտեսական մարմնի նախագահ Ա. Թերզիբաշյանը անկուսակցականներ էին:

Անցնելով իշխանության գլուխ՝ Վանի ժամանակավոր կառավարությունը անմիջապես կազմեց իր ելևմուտքի նախահաշիվը, որ նախատեսված էր միայն ութ ամսվա համար, այսինքն՝ 1915 թ. մայիսի 1-ից մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ը: Ներկայացվում էր 178.340 ռուբլի նախահաշվով մի գումար, որը բաշխվում էր քաղաքի և գավառների վրա, և որը պիտի հայթայթվեր կալվածային, վաստակի, արդյունաբերական, կրթական, դատական, դրոշմաթղթերի, քաղաքապետական և այլ տուրքերից, ինչպես նաև լքված կալվածքների և ցանքսերի արդյունքից: Մոտավորապես նույնքան ծախսեր նշանակվեցին պաշտոնեության ռոճիկների, վերաշինության, խնամատարության, առողջապահության, կրթության և այլ կարիքների համար:

Մեծ է Վանի առաջին կառավարության պետա-քաղաքական նշանակությունը Հայոց պետականության պատմության մեջ: Այն համարվում է պետականության վերականգնման մի փորձ Մայր Հայրենիքում 870 տարվա ընդմիջումից հետո: Վանի նահանգային վարչությունը իր կազմությամբ հիմք հանդիսացավ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման համար:

---

[29] **Գ. Մահարի**, Այրվող այգեստաններ, Երևան 1966, էջ 570-571, նաև **Ա. Թերզիբաշյան**, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 228: